



Կարգապահական գործ թիվ 20015

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020թ-ի նոյեմբերի 17-ի թիվ 114-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/82-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՅՈՒՐԱ ԱՎԱՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Հրանտ Անանյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Գայանե Դեմիրջյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի և Կարեն Սարգսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Յուրա Ավայանին (արտոնագիր՝ 2574) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

29.06.2020 թվականին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դ. Բալայանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է հետևյալը.

Փաստաբան Յուրա Ավայանը (**այսուհետ՝ նաև փաստաբան**) թիվ ԵԴ/0309/01/20 քրեական գործով հանդիսանում են ամբաստանյալ Վ. Սիմոնյանի պաշտպանը:

Փաստաբանը, պատշաճ ծանուցված լինելով դատական նիստերի ժամանակի և վայրի մասին, չի ներկայացել դատական նիստերին, ինչի հետևանքով դատական նիստերը անհարկի ձգձգվել են:

Մասնավորապես՝

- փաստաբանը չի ներկայացել 27.04.2020թ. նշանակված դատական նիստին և դիմում է մուտք արել դատարան, որի համաձայն Սիսիան քաղաքում քննչական գործողությունների մասնակցելու պատճառով չի կարող ներկայանալ դատական նիստին.

- փաստաբանը պատշաճ ծանուցված լինելով հանդերձ չի ներկայացել 07.05.2020թ. նշանակված դատական նիստին՝ կրկին քննչական գործողություններին

մասնակցելու պատճառաբանությամբ.

- փաստաբանը չի ներկայացել 21.05.2020թ. իր հետ նախապես համաձայնեցված դատական նիստին՝ կրկին քննչական գործողությանը մասնակցելու պատճառաբանությամբ.

- 23.05.2020թ. նշանակված դատական նիստը փաստաբանը ներկայացել է, սակայն այն նույնպես հետաձգվել է, քանի որ ամբաստանյալի վատառողջ լինելու պատճառով հնարավոր չի եղել ապահովել նրա ներկայությունը.

- փաստաբանը չի ներկայացել 19.06.2020թ. նշանակված դատական նիստին, թեև նախապես հեռախոսով դատարանի աշխատակազմից ճշտել էր, որ նիստը կայանալու է: Ըստ Դիմողի՝ փաստաբանը բարեխղճորեն չի կատարում իր պարտականությունները և անհարգալից վերաբերմունք է դրսևորում դատարանի ու դատավարության մասնակիցների նկատմամբ:

Դիմողը խնդրել է քննարկել փաստաբանի դրսևորած վարքագիծը փաստաբանի վարքագծի կանոնագրքին համապատասխանելու հարցը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 21.07.2020թ. թիվ 135-Ա/ԿԳ-20015 որոշման հիման վրա փաստաբան Յուրա Ավայանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

22.07.2020թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը 10.08.2020 թվականին ուղարկել է 2020թ. մայիսի 7-ի, 21-ի, 23-ի, 2020թ. հունիսի 19-ի և հունիսի 26-ի դատական նիստերի արձանագրության լազերային կրիչի և փաստաթղթերի պատճեններ:

Դիմողը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել:

05.10.2020թ. Փաստաբանը ներկայացրել է Առարկություն նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ, որով ըստ էության հաստատել է նախկինում իր հայտնած տեղեկությունները և կցել է մի շարք փաստաթղթեր:

Փաստաբանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստերի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 16.09.2019թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 28.09.2020թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 27.10.2020թ. ժամը 19.00-ին, 17.11.2020թ. ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- Փաստաբանը հանդիսանում է թիվ ԵԴ/0309/01/20 քրեական գործով ամբաստանյալ Վ. Սիմոնյանի պաշտպանը: *Սույն փաստը հաստատվում է Դիմումով, Փաստաբանի ներկայացրած առարկությամբ, Փաստաբանի կողմից 07.05.2020թ. ներկայացված դատական նիստը հետաձգելու մասին միջնորդությամբ և գործում առկա այլ փաստաթղթերով:*

- Փաստաբանը պատշաճ ծանուցված է եղել թիվ ԵԴ/0309/01/20 քրեական գործով **27.04.2020թ. ժամը 12.30-ին** նշանակված դատական նիստի մասին, որին չի ներկայացել: *Սույն փաստը հաստատվում է Դիմումով, ԵԴ/0309/01/20 քրեական գործով դատական նիստերի քարտուղարի 27.04.2020թ. տեղեկանքով, Փաստաբանի առարկություններով և բացատրությամբ:*

- Փաստաբանը պատշաճ ծանուցված է եղել թիվ ԵԴ/0309/01/20 քրեական գործով **07.05.2020թ. ժամը 13.00-ին** նշանակված դատական նիստի մասին, որին չի ներկայացել: *Սույն փաստը հաստատվում է Դիմումով և Փաստաբանի կողմից 07.05.2020թ. ներկայացված դատական նիստը հետաձգելու մասին միջնորդությամբ:*

- Փաստաբանը պատշաճ ծանուցված է եղել թիվ ԵԴ/0309/01/20 քրեական գործով **21.05.2020թ. ժամը 13.00-ին** նշանակված դատական նիստի մասին, որին չի ներկայացել: *Սույն փաստը հաստատվում է Դիմումով, Փաստաբանի ներկայացրած առարկություններով, Փաստաբանի ներկայացրած բացատրությամբ և 21.05.2020թ. դատական նիստի արձանագրությամբ:*

- Փաստաբանը պատշաճ ծանուցված է եղել թիվ ԵԴ/0309/01/20 քրեական գործով **19.06.2020թ. ժամը 15.00-ին** նշանակված դատական նիստի մասին, որին չի ներկայացել: *Սույն փաստը հաստատվում է Դիմումով, Փաստաբանի ներկայացրած առարկություններով, Փաստաբանի ներկայացրած բացատրությամբ և 19.06.2020թ. դատական նիստի արձանագրությամբ:*

- 21.05.2020թ. Գորիսի քննչական բաժանմունքում թիվ 41101020 քրեական գործով առերես հարցաքննությանը մասնակցել է տուժողի փաստաբան Յուրա Ավայանը, սակայն վկաները դիմում են ներկայացրել առերեսումներն այլ օր տեղափոխելու վերաբերյալ: *Սույն փաստը հաստատվում է ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչի 06.08.2020թ. գրությամբ:*

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Յուրա Ավայանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 24.05.2020թ., և 2019-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել, բացառությամբ սույն կարգապահական վարույթի:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Յուրա Ավայանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ

վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը:

Նշված կանոնը նաև վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ **պաշտպանը պարտավոր է՝ կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով:**

Քննարկելով Փաստաբանի վարքագիծը վերը նշված համատեքստում Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին.

1. արդյոք Փաստաբանը ԵԴ/0309/01/20 քրեական գործով հանդիսանում է պաշտպան.

2. արդյոք Փաստաբանը ԵԴ/0309/01/20 քրեական գործով դատական նիստերի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված է եղել.

3. արդյոք Փաստաբանը ԵԴ/0309/01/20 քրեական գործով նշանակված և Դիմումում թվարկված դատական նիստերին չի մասնակցել հարգելի կամ անհարգելի պատճառներով:

Պատասխանելով վերը թվարկված առաջին և երկրորդ հարցադրումներին Խորհուրդն արձանագրում է, որ Փաստաբանը թիվ ԵԴ/0309/01/20 քրեական գործով հանդիսացել է ամբաստանյալի պաշտպանը և պատշաճ ծանուցված եղել է թվով 4 դատական նիստերի մասին: Այս փաստերը համարվում են հաստատված նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք չեն վիճարկվել Փաստաբանի կողմից:

Ինչ վերաբերում է երրորդ հարցադրմանը այն մասին, թե արդյոք Դիմումում թվարկված դատական նիստերին Փաստաբանը չի մասնակցել հարգելի կամ անհարգելի պատճառներով, ապա Փաստաբանի կողմից վկայակոչվել է այն փաստը, որ ինքը չի մասնակցել նիստերին հարգելի պատճառներով:

Կարգի 3.3.1 ենթակետը սահմանում է՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:*

Փաստաբանը չի ներկայացրել իր կողմից վերը նշված չորս՝ 27.04.2020թ., 07.05.2020թ., 21.05.2020թ. և 19.06.2020թ. դատական նիստերին հարգելի պատճառներով չմասնակցելու մասին վերաբերելի որևէ ապացույց:

Ինչ վերաբերում է Փաստաբանի կողմից ներկայացված ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչի 06.08.2020թ. գրությանը, Պալատի խորհուրդն արձանագրում է, որ այդ գրությունը չի պարունակում որևէ տեղեկություն այն մասին, որ 21.05.2020թ-ին նշանակված քննչական գործողությունը եղել է անհետաձգելի քննչական գործողություն: Նույնիսկ այդ օրվա նիստից բացակայությունը հարգելի համարելու դեպքում, դատական մյուս 3 նիստերից բացակայելու վերաբերյալ պատճառները Պալատի խորհուրդը հարգելի չի համարվում:

Անդրադառնալով կարգապահական խախտման դրսևորման մեղքի ձևին, Խորհուրդը փաստում է, որ Փաստաբանը չի մասնակցել դատական նիստերին դիտավորությամբ:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
- 4) տուգանք
- 5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Յուրա Ավայանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով նրա նկատմամբ կիրառում է «նկատողություն» կարգապահական տույժը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- 1. Փաստաբան Յուրա Ավայանին (արտոնագիր՝ թիվ 2574) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար:**
- 2. Փաստաբան Յուրա Ավայանի նկատմամբ (արտոնագիր՝ թիվ 2574) կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:**
- 3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Յուրա Ավայանին:**

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Հրանտ Անանյան

17 նոյեմբերի 2020թ.
թիվ ԿԳ/82-Ա
ք. Երևան